ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐ. Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 19-ին՝ ուրբաթ օրը, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի հրավիրով, Մայր Աթոռ ս. Էջմիածին է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գեր. տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը։

Երևանի օդանավակայանում տ. Սերովբե սրբազանին դիմավորում են լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, տ. Ներսես ծ. վարդապետը և Հովհաննես սարկավագը։

Մայր տաճարում Իշման ս. սեղանի առաջ իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, տ. Սերովբե սրբազանը վեհարանում ջերմորեն ընդունվում է Վեհափառ Հայրապետի կողմից՝ որպես Մայր Աթոռի հարազատ զավակ և Ն. Ս. Օծության բարձրաստիճան, թանկագին հյուր։

Գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոսը Մայր Աթոռում մնաց մայիսի 19-ից մինչև հունիսի 12-ը՝ երկուշաբթի օրը։

Սրբազանը ներկա եղավ Մայր տաճարում եկեղեցական արարողությանց, մասնակցեց Գերագույն հոգևոր խորհրդի նիստերին, բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Տ. Կիրիլ սրբազան պատրիարքի Մայր Աթոռ այցելության հանդիսությանց՝ հունիսի 2-ից մինչև հունիսի 6-ը, ծանոթացավ Մայր Աթոռի կյանքին, եղբայրական շփումներ, զրույցներ ունեցավ միաբանության անդամների հետ, տիրեց նրանց անկեղծորեն՝ իրենց նվիրման ու ծառայության համար, այցելեց հոգևոր ճեմարան, ներկա եղավ դասախոսությանց և ամավերջի քննությանց, այցելեց խմբագրատուն, Մայր Աթոռի գրասենյակներ, տպարան՝ ամեն առիթով արտահայտելով իր գոհունակությունն ու ուրախությունը՝ Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ կատարված և կատարվող հոգևոր, մշակութային, վանական-վարչական, շինարարական գործերի բարվոք ընթացքի և արդյունքների համար։

Սրբազանը ուխտի գնաց Շիրակի վանքերն ու պատմական հուշարձանները, այցելեց Հառիճա և Մարմաշեն վանքերը, բարձրացավ Արագած, այցելեց Լենինական քաղաք, ս. Աստվածածին եկեղեցի, Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, մայրաքաղաքի տեսարժան վայրեր ու պատմական հուշարձաններ, եղավ հարազատների, բարեկամների հյուրընկալ օջախներում, շփումներ, տեսակցություններ ունեցավ մտավորականության, արվեստագետների հետ։

Հունիսի 11-ին՝ կիրակի օրը, ժամը 3-ին, վեհարանում, ի պատիվ տ. Սերովբե սրբազանի, ողջերթի մտերմիկ ճաշկերույթ էր տրված՝ միաբանական սեղմ շրջանակում, որին ներկա էին նաև ուխտաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրայր եպիսկոպոսը, բուլղարահայ թեմական խորհրդի առենապետ Օննիկ Ասլանյանը և տեր և տիկին Ճեհրճյանները Սուդանից։

Վեհափառ Հայրապետը ողջերթի ջերմ խոսք ասաց հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոսին՝ շեշտելով Իր ուրախությունը՝ Մայր Աթոռում նրա անցկացրած օրերի համար, և վկայեց Իր անձնական սիրո և համակրանքի մասին դեպի սրբազանի անձը։

Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը տ. Սերովբե սրբազանին նվիրեց արծաթյա մեծ ափսե ս. Էջմիածնի նկարով՝ ի նշան Հայրապետական բարձր գնահատության։

Այնուհետև սրբազանին ողջերթ մաղթեցին տ. Հայկազուն և տ. Տիրայր սրբազանները՝

Ջերմ, անկեղծ ու խորն էին տ. Սերովբե սրբազանի շնորհակալության և երախտագիտության խոսքերը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությանը։

Հունիսի 12-ին՝ երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11.40-ին տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Իշման ս. սեղանի առաջ իր աղոթքը կատարելուց հետո, լավագույն տպավորություններով, անմոռաց հուշերով հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից, միաբանությունից և մեկնեց Մոսկվա։

Հանուն Վեհափառ Հայրապետի, տ. Սերովբե սրբազանին ճանապարհեցին լուսարարապետ տ. Հայկազուն և տ. Տիրայր սրբազանները և դիվանապետ Հ. Առաքելյանը։

Բարի ճանապարհ մեր սիրելի և թանկագին տ. Սերովբե սրբազանին։